

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան
Անգլերեն Սովորողների Խորհրդի Շրջանային Կոմիտե
Շրջանային գրասենյակ-երրորդ հարկ-ուսուցիչների ռեսուրսների սենյակ

Օրակարգ
Չորեքշաբթի, մարտի 13, 2019
Առավոտյան ժամը 9:30 – 11:30

	2.1ա Գլխավոր ծրագրի մշակումը անգլերեն սովորողների համար		2.2 Սեմինար պարապմունք DELAC-ի անդամների համար
	2.1բ Կարիքների գնահատման շրջանային քննություն անցկացնել յուրաքանչյուր դպրոցում		2.3 Համախմբված դիմումը մշակվել է DELAC -ի առաջարկների հիման վրա
X	2.1գ Շրջանային ծրագրեր և նպատակներ հաստատել անգլերեն սովորողների համար		2.1գ Վերանայել և ակնարկել ծնողներին/պահապաններին ուղարկվող գրավոր հաղորդակցության վերաբերյալ
	2.1դ Ծրագիր մշակել ուսուցիչների և օգնականների պահանջները համապատասխանեցնելու համար	X	2.1ե Վերանայել և ակնարկել LCAP ծրագրի մշակման վերաբերյալ
X	2.1ե Վերանայել և ակնարկել շրջանի վերադասակարգման գործընթացը		2.3 Համախմբված դիմումը մշակվել է DELAC -ի առաջարկների հիման վրա

Ներկա ծնողները.

Էդելմիրա Կոնտրերաս, Լիլիանա Դելգադո, Լինեթ Ֆանայի, Հիլդա Գալլեն, Նուրիա Լուներեգ, Ռուբիլ Թորոսյան, Լյուբա Թոմաս, Միդիա Վալթի

Ներկա աշխատակիցներ.

Անա Արզումանյան, Էնջի ԴՄելլո, Թրեյսի Ֆելլման, Ջենիֆեր Գոլդենբերգ, Մաթ Հիլլ, Կիրստեն Ջակսոն, Լոռի Քելլի, Փիտր Քնապիկ, Ջիմ Կունց, Լոռա Մեսայան, Ջոն Պարամո, Էստելա Սերմենո, Դիորա Տինեո, Սոնլե Վորչակ, Պամելա Ջիմնի

I. Բարի գալուստ և ծանոթություն

II. Ժողովի բացումը – Ժողովը բացվեց առավոտյան ժամը 9:33-ին:

A. Ժողովի բովանդակության հաստատումը

Ժողովի բովանդակությունը պետք է վերանայվի և հաստատվի ապրիլ ամսվա ժողովի ընթացքում: Օրիորդ Ջիմնիի անունը պետք է ուղղել իսպաներեն թարգմանության օրինակում:

B. Առաջարկված օրակարգի հաստատումը

Տիկին Գոլդենբերգը ծնողներին հատկացրեց DELAC-ի ձեռնարկ, փոփոխված օրակարգով: Փետրվար ամսվա թեմաները, պատահականորեն տեղափոխվել էին մարտ ամսվա օրակարգ: Տիկին Գոլդենբերգը առաջարկեց հաստատել օրակարգը, հանելով «Ծնողական ֆորում» թեման: Օրիորդ Քելլին նույնպես առաջարկեց հաստատել այն:

Բրբենքի Միացյալ Դպրոցական Շրջանը հետևում է, որ կրթական հավասարություն լինի բոլոր անհատների համար: Շրջանի ծրագրերն ու գործունեությունները գերծ պիտի լինեն **անօրինական խտրականությունից, ներառնելով խտրականություն որևէ անհատի կամ խմբի նկատմամբ, որը հիմնված է նրա ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգության, ազգային ծագման, ներգաղթի կարգավիճակի, էթնիկ խմբերի ճանաչման, էթնիկության, տարիքի, կրոնի, ամուսնական կարգավիճակի, հոլիության, ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ հոգեկան անկարողունակության, սեռի, սեռային կողմնորոշման, սեռային ինքնության, սեռային արտահայտության կամ սեռային տեղեկության, մեկ կամ մի քանի իրական կամ ընկալվող հատկանիշներ ունեցող անհատի կամ խմբի վրա:**

III. Իրավական պահանջներ

A. Վերանայել և ակնարկել LCAP նպատակ #6 և #7-ի մշակման վերաբերյալ:

- i. Դոկտոր Պարամոն ծնողներին հատկացրեց «2017-2018 LCAP բյուջե նպատակ #6» ձեռնարկը և խոսեց յուրաքանչյուր կետի վերաբերյալ: Ծնողները հարցեր չունեին:
- ii. Դոկտոր Պարամոն Dr. ծնողներին հատկացրեց «2017-2018 LCAP բյուջե նպատակ #7» ձեռնարկը և խոսեց յուրաքանչյուր կետի վերաբերյալ: Տիկին ԴՄԵլլոն նշեց, որ պետք է ուղղում կատարել «Բյուջետավորվել է 2018-2019» բյուջե առաջին կետում: Դոկտոր Պարամոն կուղղի այդ վրիպումը:
 1. Առաջարկություն է արվել ֆինանսավորել մեկ բուժքրոջ լրացուցիչ հիմնադրամից, հիմնական հիմնադրամում տեղ բացելու համար, քանի որ բուժքրոջ աշխատանքը կատարվելու է ֆինանսավորման աշխատանքի այդ շրջանակում: Տիկին Լուսբերգը հարցրեց, թե որտեղ են ներկայումս աշխատում այդ բուժքույրները: Դոկտոր Հիլլը բացատրեց, որ ինքը հաստատ կհամոզվի, որ այդ բուժքույրերը կաշխատեն այն դպրոցներում, որտեղ ամենաշատ պահանջ կա:
 2. Տիկին ԴՄԵլլոն հարցրեց. «Եթե փոփոխություն է կատարվում լրացուցիչ հիմնադրամի ֆոնդում, ի՞նչն է փոփոխվում»: Փոփոխությունները կատարվում են շատ ուշադիր և նպատակաուղղված ձևով:
 3. Տիկին Լուսբերգը հարցրեց, թե որտե՞ք են վարքի միջամտող մասնագետի պարտականությունները: Դոկտոր Պարամոն ասաց, որ նրանք ընդհանրապես աշխատում են Հատուկ Ուսուցման ծրագրի ծառայություններ ստացող աշակերտների հետ:
 4. Ծնողներից մեկը հարցրեց, թե ինչու՞ է դպրոցական շրջանում դրամի պակասորդ զգացվում, եթե 2017-2018 ուսումնական տարում բյուջետավորված դրամից ավելի քիչ դրամ է ծախսվել: Մյուս նպատակները ավելացած ծախսեր են ունեցել, որոնք նույնպես ֆինանսավորվել են LCAP լրացուցիչ հիմնադրամով:
 5. Դպրոցական շրջանը նոր ընկերություն է փնտրում Հանովեր Հետազոտական Կոմիտեին փոխարինելու համար, որոնք անց են կացնում դպրոցի հարցադրումները: Առաջարկությունը կկատարվի մինչև տարվա վերջ:
- iii. Դոկտոր Պարամոն ծնողներին հատկացրեց «Տեղական Հսկողության և Հաշվետվողականության Ծրագիր (LCAP). «LCAP նպատակ #6 և #7»-ի վերանայում» ձեռնարկը և բացատրեց յուրաքանչյուր էջի բովանդակությունը:
 1. Հարց. Ի՞նչ է նշանակում PBIS հապավումը: Այն նշանակում է «Դրական վարքի միջամտություն և աջակցություն»:
 2. Հարց. Ո՞վ է պատասխանատվություն կրելու բարեկեցության ծրագրի համար, եթե նրա վարիչի աշխատանքը կրճատվի: Պատասխան. Դոկտոր Պարամոն պատասխանեց, որ գերատեսչի տեղակալ՝ դոկտոր Թոմ Քիսինջերը կկրի այդ պարտականությունը և կշարունակի ապահովել ծառայությունները:

Բրեքի Միացյալ Դպրոցական Շրջանը հետևում է, որ կրթական հավասարություն լինի բոլոր անհատների համար: Շրջանի ծրագրերն ու գործունեությունները գերծ պիտի լինեն **անօրինական խտրականությունից, ներառելով խտրականություն որևէ անհատի կամ խմբի նկատմամբ, որը հիմնված է նրա ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգության, ազգային ծագման, ներգաղթի կարգավիճակի, էթնիկ խմբերի ճանաչման, էթնիկության, տարիքի, կրոնի, ամուսնական կարգավիճակի, հղիության, ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ հոգեկան անկարողունակության, սեռի, սեռային կողմնորոշման, սեռային ինքնության, սեռային արտահայտության կամ սեռային տեղեկության, մեկ կամ մի քանի իրական կամ ընկալվող հատկանիշներ ունեցող անհատի կամ խմբի վրա:**

3. Հարց. Ինչու՞ են համալսարանի պահանջների հետ աշակերտները ծանոթանում առողջության դասի ընթացքում: Պատասխան. Օրիորդ Ֆելլմանը ասաց, որ 9-րդ դասարանի բոլոր աշակերտները անցնում են այդ դասը և արդյունավետ է բոլորին դասավանդել այդ նույն թեման, որը նաև կրթական ծրագրի մասն է կազմում: Դոկտոր Պարամոն ավելացրեց նաև, որ այդ դասընթացը կոչվում է նաև «առողջություն/մասնագիտություններ» և համալսարան ընդունվելու պահանջները կապված են դպրոցը ավարտելու և ուսումը շարունակելու հետ:
4. Նպատակ #7.8-ի և 6-րդ դասարանի գիտության դասի հետ կապված, ծնողներից մեկը հարցրեց, թե արդյոք այն կընդգրկի սննդի որակի թեման: Եթե դպրոցը սովորեցնում է առողջ ապրելակերպ, ինչպես է այն ապահովելու սննդի որակը: Պատասխան. Դոկտոր Հիլը հրավիրեց ծնողներին մասնակցել «Բարեկեցության ֆիզիկական գործունեության և սնուցում» (PAN) կոմիտեի հանդիպումներին: Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանը համապատասխանում է դաշնային չափանիշների հետ, որոնք ամենաքիչ պահանջներն են և կարող ենք ունենալ ավելի բարձր չափանիշներ: Այնուամենայնիվ, դոկտոր Հիլը պետք է այդ մասին լսի շահախնդիր կողմերից: Պարոն Թորոյանը ավելացրեց, որ այդ նույն թեմայի շուրջ խոսվել է PTA ժողովի ընթացքում: Դոկտոր Հիլն ասաց, որ դպրոցական շրջանը շարունակում է բարելավել աշակերտների առողջարար ապրելակերպը և նորից հրավիրեց ծնողներին միանալ PAN կոմիտեին կամ էլ էլեկտրոնային նամակ ուղարկել իրենց առաջարկներով:

B. Վերանայել և ակնարկել շրջանի վերադասակարգման գործընթացի վերաբերյալ

- i. Տիկին Գոլդենբերգը խոսեց աշակերտի ELD ծրագրից դուրս գալու իրավական պահանջների վերաբերյալ, որը կոչվում է վերադասակարգում (նայել փառուեր փոփոխ ներկայացմանը):
- ii. Օրիորդ Մեսսյանը հարցրեց. «Ի՞նչ է լինում այն ժամանակ, երբ աշակերտը դրական գնահատական չի ստանում մաթեմատիկայից»: Տիկին Գոլդենբերգը պատասխանեց, որ մաթեմատիկայի գնահատականը միայն տեղեկատու իմաստ ունի և աշակերտը կարող է վերադասակարգվել, եթե հասել է մյուս չափանիշներին:
- iii. Ծնողները մեկը առաջ քաշեց անգլերեն սովորողների մասնակցության հարցը Շնորհալի և Տաղանդավոր ծրագրում (GATE) ընդգրկվելից: Նա ցանկացավ պարզաբանել, թե ինչպես է աշակերտը ստնում ELD ծրագրի ծառայություններ: Ակնարկ. եթե ծնողը անգլերեն լեզվից բացի մեկ այլ լեզու է նշում մայրենի լեզվի հարցաթերթիկում (Home Language Survey), ապա երեխան ինքնաբերաբեր ստանում է ELD ծրագրի ծառայություններ: Պատասխան. տիկին Գոլդենբերգը ասաց, որ եթե նշված է մեկ այլ լեզու, աշակերտը հանձնում է Կալիֆոռնիայի Նահանգի Անգլերեն Լեզվի Հմտության Քննությունը (ELPAC): Այդ քննության միջոցով պարզում են, թե ովքեր են անգլերեն սովորողներ և ովքեր են սահուն անգլերեն սովորողներ: Ինչ վերաբերվում է GATE ծրագրին, 3-րդ դասարանի բոլոր աշակերտները հանձնում են GATE ծրագրի քննություն, առանց հաշվի առնելու նրանց լեզվի հմտությունը: GATE ծրագրի քննությունը անվանում են CogAt և այն կարողանում է գտնել այդ աշակերտներին առանց հաշվի առնելու նրանց լեզվի հմտությունը:
- iv. Ակնարկ. Ծնողներից մեկը ցանկացավ, որ դպրոցական շրջանը շարունակի

Բրբենքի Միացյալ Դպրոցական Շրջանը հետևում է, որ կրթական հավասարություն լինի բոլոր անհատների համար: Շրջանի ծրագրերն ու գործունեությունները գերծ պիտի լինեն **անօրինական խտրականությունից, ներառելով խտրականություն որևէ անհատի կամ խմբի նկատմամբ, որը հիմնված է երա ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգության, ազգային ծագման, ներգաղթի կարգավիճակի, էթնիկ խմբերի ճանաչման, էթնիկության, տարիքի, կրոնի, ամուսնական կարգավիճակի, հղիության, ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ հոգեկան անկարողունակության, սեռի, սեռային կողմնորոշման, սեռային ինքնության, սեռային արտահայտության կամ սեռային տեղեկության, մեկ կամ մի քանի իրական կամ ընկալվող հատկանիշներ ունեցող անհատի կամ խմբի վրա:**

շեշտադրել, որ մենք (շրջանը և նահանգը) գտնվում ենք անցումային շրջանում: Անցյալ տարի, աշակերտները սկսեցին հանձնել ELPAC քննությունը, և դրա պատճառով 1 կամ 2 տարի չենք կարող քննության արդյունքները համեմատել, քանի որ նախկին քննությունը (CELDT) չի կարող համեմատվել ELPAC քննության հետ: ELD մասնագետները, ELAC ժողովների ընթացքում, ծանոթացրել են ծնողներին այդ վիճակի մասին: Դոկտոր Քնապիկը ավելացրեց, որ անցյալ տարվա քննության արդյունքները հիմնային կետ հանդիսացան ապագայում առաջընթացը չափելու համար:

C. Շրջանի ամառային ծրագրերը անգլերեն սովորողների համար

- i. Տիկին Գոլդենբերգը վերանայեց, ամառային դպրոցի շրջանի ծրագրերը: Ծրագրերից մեկը, անգլերեն սովորողներին հնարավորություն է տալիս սկզբնական կրեդիտ ստանալ, համալսարան ընդունվելու ա-է պահանջներին բավարարելու համար: Օրինակ՝ միայն ELD 3 դասընթացն է համարվում ա-է պահանջին բավարարող դաս, մինչդեռ ELD 1 և 2 դասընթացները միայն միջնակարգ դպրոցը ավարտելու համար են: Աշակերտները կարող են վերցնել այդ դասընթացը ամառվա ընթացքում ա-է չափանիշներին բավարարելու համար:
- ii. Միջանկյալ դպրոցները ծնողներին են ուղարկելու տեղեկություն արձանագրության և ամառային ճամբարի դասերի վերաբերյալ՝ միջնակարգ դպրոց փոխադրվելուն աջակցելու համար:
- iii. Օրիորդ Մեսսիանը պարզաբանում պահանջեց 12-րդ դասարանի ամառային դասընթացների վերաբերյալ: Փառուեր փոփոխ ներկայացման մեջ վրիպակ էր թույլ տրվել և տիկին Գոլդենբերգը ասաց, որ 12-րդ դասարանցիները ELD ծրագրի ամառային դասընթացներ չեն կարող վերցնել:
- iv. Տարրական դպրոցի ամառային դասընթացների վերաբերյալ, տիկին ԴՄելլոն ավելացրեց, որ ELD մասնագետները ջանում են ամառային դպրոցի դասընթացների հրավիրել նաև աշակերտների քույրերին և եղբայրներին, եթե նրանք համապատասխանում են չափանիշին: Եթե նրանց գնահատականների թերթիկը պարունակում է դասարանի մակարդակի գնահատականներ, նրանք չեն կարող մասնակցել, քանի որ ուրիշ աշակերտները կան, որոնք համապատասխանում են չափանիշին:
- v. Հարց. Կարող ե՞ն ԱՄ-ի աշակերտները մասնակցել ամառային դպրոցի դասընթացներին: ԱՄ-ի և մանկապարտեզի աշակերտները չեն կարող մասնակցել, քանի որ պահանջը ավելի մեծ է մյուս դասարաններում և բյուջերի հետ կապված խնդիրներ կան:

IV. Կոմիտեի զեկուցումներ

A. Հոգեկան առողջություն և բարեկեցություն

- i. Տիկին Լուներբերգը հարցրեց ծնողներին, թե արդյոք նրանք իրազեկ են «Մոմոյի» մասին: Ծնողներին խորհուրդ տրվեց հյուրընկալել շրջանի կայքի հոգեկան առողջության և բարեկեցության բաժինը հավելյալ տեղեկություններ ստանալու համար:

B. Հաղորդակցական բաժին

Բրեքի Միացյալ Դպրոցական Շրջանը հետևում է, որ կրթական հավասարություն լինի բոլոր անհատների համար: Շրջանի ծրագրերն ու գործունեությունները գերծ պիտի լինեն **անօրինական խտրականությունից, ներառելով խտրականություն որևէ անհատի կամ խմբի նկատմամբ, որը հիմնված է նրա ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգության, ազգային ծագման, ներգաղթի կարգավիճակի, էթնիկ խմբերի ճանաչման, էթնիկության, տարիքի, կրոնի, ամուսնական կարգավիճակի, հղիության, ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ հոգեկան անկարողունակության, սեռի, սեռային կողմնորոշման, սեռային ինքնության, սեռային արտահայտության կամ սեռային տեղեկության, մեկ կամ մի քանի իրական կամ ընկալվող հատկանիշներ ունեցող անհատի կամ խմբի վրա:**

- i. Տիկին Լուսինե Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց օրիորդ Զիմինին, Ջոն Բրոք դպրոցի ELAC ժողովի ընթացքում իրեն լավ ընդունելություն ցույց տալու համար, որին հրավիրված էին նաև աշակերտները: Նա ասաց, որ ժողովն անցավ ջերմ մթնոլորտում: Տիկին Լուսինե Գրիգորյանը, DELAC ժողովի մասնակիցներին ցուցադրեց օրիորդ Զիմինի պատրաստած գրքույքը, հաղորդակցությունը արդյունավետորեն անցկացնելու համար: Օրիորդ Զիմինն ասաց, որ կկիսի այդ տեղեկություն ELD մյուս մասնագետների հետ: ELAC ժողովի ընթացքում, աշակերտները և ծնողները հայտնեցին իրենց կարծիքը առաջարկված «ընկերական համակարգ» ստեղծելու վերաբերյալ: Օրիորդ Զիմինն հեռախոսահամարների ցուցակ է կազմում, անցվեք սովորող աշակերտների ծնողների համար, որպեսզի նրանք խթանեն համայնքը և կապ ստեղծեն մյուս ծնողների հետ: Հեռախոսահամարները պետք է հաստատվեն ծնողների կողմից մինչև տարծվելը:

C. PTA խորհուրդ – զեկուցումներ չկան

V. Չավարտված գործեր

- A. Դպրոցների զեկուցումները «Ընկերական համակարգ»-ի, անցվեք սովորող աշակերտների ծնողների և ծնողական կենտրոնների վերաբերյալ, որոնք կատարվել են տիկին Լուսինե Գրիգորյանի և տիկին Գուրգեն Գրիգորյանի աջակցության շնորհիվ:
 - i. Տիկին Լուսինե Գրիգորյանը ասաց, որ ինքը խոսել է Միացյալ Նահանգներ ժամանած նոր ծնողի հետ, որը կցանկանար «ընկեր» ունենալ, ում կարող էր դիմել տարբեր հարցերով: Տիկին Լուսինե Գրիգորյանը ասաց նաև, որ իր կարծիքով, լավ միտք է այն ծնողների համար, ում օգնություն է հարկավոր դպրոցից դուրս:
 - ii. Օրիորդ Տիմոնն առաջարկեց, որ DELAC ժողովի ներկայացուցիչ ծնողներ խաղան այդ «ընկերոջ» դերը:
 - iii. Դիգնի դպրոց. Ծնողները և տիկին Ջակոբն ասացին, որ «ընկերական համակարգ» հարկավոր չէ, որովհետև արդեն գործող համակարգ ունեն ծնողներին օգնելու համար:
 - iv. Հարթ դպրոց. Դպրոցի ELD օգնականը արդեն շատ մեծ օգնություն է ցուցաբերում ծնողներին:
 - v. Պրովիդենսիա դպրոց. Դպրոցը ներկայացնող ծնողը ասաց, որ «ընկերական համակարգի» կարիք կա:
 - vi. Էդիսոն դպրոց. Տիկին Դ'Մելլոն դպրոցի PTA կազմակերպության նախագահին հրավիրել էր ներկա գտնվել ELAC ժողովին: ELAC կոմիտեի ծնողները առաջարկեցին հետաքրքրված կամավորների հեռախոսահամարի ցուցակ կազմել և հատկացնել նոր ծնողներին:
 - vii. Միլլեր դպրոց. Լավ կլինի, եթե «ընկերական համակարգ» գործի, բայց հարկավոր չէ գոյություն ունեցող կառուցվածքի պատճառով:
 - viii. Ռուզվելտ դպրոց. ELAC ժողովը դեռ չի գումարվել: Այդ հարցը կքննարկվի հաջորդ ժողովի ընթացքում:
 - ix. Ջեֆֆերսոն դպրոց. ELAC ժողովը դեռ չի գումարվել: Այդ հարցը կքննարկվի հաջորդ ժողովի ընթացքում:

Բրեքի Միացյալ Դպրոցական Շրջանը հետևում է, որ կրթական հավասարություն լինի բոլոր անհատների համար: Շրջանի ծրագրերն ու գործունեությունները գերծ պիտի լինեն **անօրինական խտրականությունից, ներառելով խտրականություն որևէ անհատի կամ խմբի նկատմամբ, որը հիմնված է նրա ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգության, ազգային ծագման, ներգաղթի կարգավիճակի, էթնիկ խմբերի ճանաչման, էթնիկության, տարիքի, կրոնի, ամուսնական կարգավիճակի, հղիության, ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ հոգեկան անկարողանակության, սեռի, սեռային կողմնորոշման, սեռային ինքնության, սեռային արտահայտության կամ սեռային տեղեկության, մեկ կամ մի քանի իրական կամ ընկալվող հատկանիշներ ունեցող անհատի կամ խմբի վրա:**

- x. Մքինլի դպրոց. Լավ կլինի, եթե «ընկերական համակարգ» գործի, բայց հարկավոր չէ գոյություն ունեցող կառուցվածքի պատճառով:
- xi. Լյութեր դպրոց. Լավ կլինի, եթե գործի:
- xii. Ջորդան դպրոց. Դեռ որոշված չէ: Անցած ժողովի ժամանակ ներկա էին խոսնակ հյուրեր, ունեն շատ հզոր ELAC և Hablemos կոմիտեներ:
- xiii. Մյուիր դպրոց. Դեռ որոշված չէ: ELAC ժողովը կգումարվի վաղը:
- xiv. Բրբենք միջնակարգ դպրոց. Կարիք չկա, աշակերտները ասացին, որ իրենց ընտանիքները աջակցության կարիք չունեն և գիտեն, թե ում հետ կապվել:
- xv. Ակնարկ. Նոր ծնողներից մեկը խոսեց իր փորձի և հնարավոր ընկերական համակարգի մասին: Հանդիպում նշանակվեց հաջորդ օրը տիկին ԴՄելլոյի հետ:
- xvi. Ակնարկ. Ծնողներից մեկը խոսեց տարբեր լեզուներով խոսող էթնիկ խմբերի իր հասկացության մասին և ասաց, որ համայքի աջակցությունը անհրաժեշտ է:
- xvii. Ժամանակի սահմանափակման պատճառով, «ընկերական համակարգ» անգլերեն սովորող աշակերտների ծնողների և ծնողական կենտրոնների վերաբերյալ կշարունակվի հաջորդ ժողովի ընթացքում:

VI. Նոր գործեր

- A. Շրջանի կայքը և տեղեկություն ELD ծրագրի վերաբերյալ տեղափոխվեց հաջորդ ժողովի ընթացքում քննարկելու համար:
- B. Լեզվի հաշվառման արդյունքները տեղափոխվեց հաջորդ ժողովի ընթացքում քննարկելու համար:

VII. Ժողովի վերջը – Ժողովը ավարտվեց առավոտյան ժամը 11:43-ին:

Բրբենքի Միացյալ Դպրոցական Շրջանը հետևում է, որ կրթական հավասարություն լինի բոլոր անհատների համար: Շրջանի ծրագրերն ու գործունեությունները զերծ պիտի լինեն անօրինական խտրականությունից, ներառելով խտրականություն որևէ անհատի կամ խմբի նկատմամբ, որը հիմնված է նրա ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգության, ազգային ծագման, ներգաղթի կարգավիճակի, էթնիկ խմբերի ճանաչման, էթնիկության, տարիքի, կրոնի, ամուսնական կարգավիճակի, հղիության, ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ հոգեկան անկարողունակության, սեռի, սեռային կողմնորոշման, սեռային ինքնության, սեռային արտահայտության կամ սեռային տեղեկության, մեկ կամ մի քանի իրական կամ ընկալվող հատկանիշներ ունեցող անհատի կամ խմբի վրա: